Ա-69

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՀԱՅԿ ՄԱՄԻԿՈՆԻ

ԻՐԱՆ-ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1940-1950-ԱԿԱՆ ԹԹ

Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2026

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ պ. գ. թ., դոցենտ

Գոհար Մանվելի Իսկանդարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ. գ. դ., պրոֆեսոր

Ռուբեն Հովհաննեսի Մելքոնյան

պ. գ. թ., դոցենտ

Նազելի Սերժիկի Նավասարդյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2026 թ. փետրվարի 25-ին, ժ. 14:00, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի «Համաշխարհային պատմություն» 006 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թ. հունվարի 24-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական

քարտուղար՝ պ. գ. թ., դոցենտ Ա. Ա. Փաշայան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: 1940-1950-ական թթ. Իրանի և Մեծ Բրիտանիայի հարաբերությունները միջազգային հարաբերությունների պատմության և տարածաշրջանային քաղաքականության տեսանկյունից շարունակում են մնալ ուսումնասիրության համար կարևոր՝ պայմանավորված ինչպես Իրանի ներքին և արտաքին քաղաքականության վրա այդ ժամանակաշրջանի իրադարձությունների ազդեցությամբ, այնպես էլ լայնածավալ աշխարհաքաղաքական գործընթացների մեջ դրանց նշանակությամբ:

Ուսումնասիրվող ժամանակահատվածը համընկնում է համաշխարհային պատմության վճռորոշ փուլերից մեկի հետ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից մինչև Սառը պատերազմի սկզբնական շրջան: 1941 թվականին դաշնակիցների կողմից Իրանի ռազմակալումը և Ռեզա շահին պարտադրված հրաժարականը ցույց տվեցին երկրի ռազմավարական նշանակությունը Մերձավոր Արևելքում և միջազգային տերությունների մրցակցության առակա դառնալու իրողությունը: Այդ գործընթացները կանխորոշեցին արտաքին ուժերից Իրանի քաղաքական համակարգի կախվածությունը և ընդգծեցին Մեծ Բրիտանիայի, Խորհրդային Միության և ԱՄՆ-ի դերակատարությունը երկրի քաղաքականության ուղղորդման մեջ:

Իրանի նավթային հարցը, մասնավորապես Անգլո-իրանական նավթային ընկերության (ԱԻՆԸ) շուրջ առաջացած հակասությունները և 1951 թ. նավթարդյունաբերության ազգայնացումը դարձավ ոչ միայն Իրանի, այլև ամբողջ տարածաշրջանի պատմական իրադարձություններից մեկը, որը նշանակալի դեր ունեցավ տարածաշրջանում տեղի ունեցած հետագա զարգացումների վրա: Դրանք կարևոր են հասկանալու համար ինչպես ազգային ինքնիշխանության հաստատման և տնտեսական անկախության ձգտման գործընթացները, այնպես էլ նեոգաղութատիրական քաղաքականության դիմակայման մեխանիզմները:

Իրանի և Մեծ Բրիտանիայի հարաբերությունների այս փուլն ուսումնասիրվում է ոչ միայն դիվանագիտական պատմության, այլև միջազգային հարաբերությունների տեսությունների կիրառման տեսանկյունից: Այն վերլուծության է ենթարկվել նեոռեալիզմի, կախվածության տեսության և հետգաղութատիրական մոտեցումների համադրությամբ՝ բացահայտելով փոքր և միջին պետությունների քաղաքականության սահմանափակումներն ու հնարավորությունները մեծ տերությունների մրցակցության պայմաններում:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև ներկայիս միջազգային հարաբերություններում տեղի ունեցող զարգացումներով: 21-րդ դարում Իրանի աշխարհաքաղաքական դիրքը, նավթային և էներգետիկ ռեսուրսները, ինչպես նաև նրա հարաբերություններն Արևմուտքի հետ

շարունակում են ձևավորվել նույն պատմական հիմքերի վրա, որոնք դրվել են 1940-1950-ական թվականներին: Այս պատմական փորձը կարևոր է՝ հասկանալու Իրանի Իսլամական Հանրապետության ներկայիս արտաքին քաղաքականության առանձնահատկությունները՝ զգուշավորությունը, Արևմուտքի հանդեպ անվստահությունը և ինքնիշխանության նկատմամբ ընդգծված զգայունությունը:

Այսպիսով, Իրանի և Մեծ Բրիտանիայի հարաբերությունների՝ մեր կողմից ուսումնասիրված ժամանակահատվածն արդիական է ոչ միայն թեմայի պատմական նշանակության և տարածաշրջանային քաղաքականության փոխակերպումների տեսանկյունից, այլև որպես վերլուծական հարթակ՝ բացահայտելու նավթային քաղաքականության պատմական ժառանգությունը, մեծ տերությունների ազդեցության մեխանիզմները զարգացող պետությունների վրա:

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է համակողմանիորեն վերլուծել և ներկայացնել Մեծ Բրիտանիայի և Իրանի միջև 1940-1950-ական թվականների հարաբերությունները՝ բացահայտելով դրանց ձևավորման պատճառները, առանձնահատկությունները և հետևանքները: Հատուկ ուշադրություն է դարձվել այդ ժամանակաշրջանի աշխարհաքաղաքական համատեքստում նավթի գործոնի և գերտերությունների (ԽՍՀՄ, ԱՄՆ) ազդեցությանը: Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Վերլուծել Իրանի տարածք Մեծ Բրիտանիայի ներխուժման և ռազմական ներկայության իրական պատճառները, նպատակները և շահերը 1941-1945 թվականներին:
- Ուսումնասիրել ԱԻՆԸ գործունեությունը և դրա ազդեցությունն իրանա-բրիտանական հարաբերությունների վրա, ինչպես նաև վեր հանել Իրանի կրած տնտեսական և քաղաքական վնասները:
- Բացահայտել նավթադյունաբերության ազգայնացման գործընթացի պատճառները, ընթացքը և հետևանքները՝ ներկայացնելով Մոհամմադ Մոսադեղի կառավարության դիրքորոշումն ու քաղաքականությունը:
- Քննության առնել Մ. Մոսադեղի կառավարության անկման պատճառահետևանքային կապը՝ գնահատելով ինչպես նրա վարած քաղաքականության դրական և բացասական կողմերը, այնպես էլ Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի գաղտնի միջամտությունը:
- Գնահատել Միջազգային նավթային կոնսորցիումի ստեղծման ազդեցությունը երկրի տնտեսական և քաղաքական զարգացման վրա:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Ատենախոսության ժամանակագրությունն ընդգրկում է 1940-50-ական թթ., այն է՝ Երկրորդ համաշխարհային պատերազմում դաշնակիցների՝ մասնավորապես

Մեծ Բրիտանիայի և ԽՍՀՄ կողմից Իրանի տարածքի երկկողմանի ռազմակալումից մինչև Միջազգային նավթային կոնսորցիումի ստեղծումն ընկած ժամանակահատվածը: Վերոնշյալ ժամանակահատվածում Իրանի ռազմակալումից և մասնավորապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նոր ռազմաքաղաքական իրադրություն ձևավորվեց, իսկ գերտերությունների միջև հավասարակշռության խախտումից հետո արտաքին քաղաքականության նոր ուղղվածությունը որոշիչ եղավ նաև երկրի հետագա պատմական զարգացման ընթացքի վրա: Այնուհետև նավթի ազգայնացման շուրջ երկրում բռնկված ոգևորությունը խորը ճգնաժամ առաջացրեց բրիտանիրանական հարաբերությունում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտությունն իրականացվել է որպես նարատիվային ուսումնասիրություն (case study)՝ միավորելով փաստական և պատմագրական մոտեցումները:

Հետազոտության տեսական շրջանակը կառուցված է միջազգային հարաբերությունների հիմնական տեսությունների՝ ռեալիզմի և նեոռեալիզմի, կոնստրուկտիվիզմի և հետգաղութային տեսության (պոստկոլոնիալիզմ) վրա: Այս տեսությունների համադրումը հնարավորություն է տալիս վերլուծելու հարաբերություններն ինչպես իշխանության և ազգային շահերի, այնպես էլ ինքնությունների, նորմերի և պատմական անհավասարությունների տեսանկյունից:

Հետազոտությունն կատարվել է որակական մեթոդների համադրմամբ, որոնք հնարավորություն են տալիս կատարել խորը և համապարփակ վերլուծություն՝ հիմնվելով մասնագիտական և սկզբնաղբյուրային հարուստ նյութի վրա:

Աշխատանքը շարադրելիս կիրառվել են առաջնային (ելույթներ, ուղերձներ, հայտարարություններ, արտաքին քաղաքականությանը և ազգային անվտանգությանը վերաբերող փաստաթղթեր, որոնք ուղղակիորեն առնչվում են հետազոտության խնդրո առարկային), երկրորդային (հետազոտության առարկային և խնդիրներին առնչվող հոդվածներ, մենագրություններ, վերլուծական աշխատանքներ, Իրանի պատմությանը վերաբերող նյութեր, փաստաթղթեր, և երրորդային (հանրագիտարաններ) աղբյուրներ:

Հետազոտության մեթոդաբանական կառուցվածքը հիմնված է պատմահամեմատական, փաստաթղթային, բովանդակային և համեմատական քաղաքական վերլուծության համալիր մեթոդաբանական մոտեցումների վրա:

Ատենախոսության գիտական նորույթը: Սույն ատենախոսությունը ներկայացնում է Իրան-Մեծ Բրիտանիա հարաբերությունների 1940-1950-ական թվականների քննական և համակողմանի վերլուծություն՝ հիմնված ժամանակակից ակադեմիական դաշտում ընդունված տեսական և

մեթոդաբանական մոտեցումների վրա, ինչն ապահովում է նրա գիտական նորույթը: Աշխատանքը փորձ է նոր լույսի ներքո դիտարկել մի շարք առանցքային խնդիրներ:

Տեսական բազմաշերտություն և համալիր վերլուծություն: Ի տարբերություն թեմային նվիրված նախկին աշխատանքների, որոնք հաճախ սահմանափակվում են միայն ռեալիստական շրջանակներով, սույն ատենախոսությունը կիրառում է ռեալիզմի և նեոռեալիզմի, կոնստրուկտիվիզմի և պոստկոլոնիալիզմի սինթեզված տեսական շրջանակ: Այս բազմատեսական մոտեցումը թույլ է տալիս բացահայտելու հարաբերությունների բարդ դինամիկան՝ ոչ միայն իշխանության և ազգային շահերի, այլև ինքնությունների, նորմերի, փոխադարձ ընկալումների, ինչպես նաև գաղութատիրական ժառանգության և իշխանության ասիմետրիկ կառուցվածքների համատեքստում: Սա նորովի կբացահայտի այն հիմնարար գործոնները, որոնք ձևավորել են այդ ժամանակաշրջանի իրադարձությունները:

Ինքնությունների և նորմերի դերի ընդգծում: Աշխատանքը հատուկ ուշադրություն է դարձնում ինքնությունների կառուցմանը և նորմատիվային բանավեճերին, ինչը հաճախ բացակայում է թեմայի վերաբերյալ առկա գրականության մեջ: Կոնստրուկտիվիզմի կիրառումը թույլ է տալիս հասկանալ, թե ինչպես է Իրանի ազգայնական ինքնությունը և ինքնիշխանության ձգտումը (մասնավորապես նավթի ազգայնացման հարցում) բախվել Մեծ Բրիտանիայի կայսերական ինքնությանը և գերակայող նորմերին: Ուսումնասիրվում է, թե ինչպես են երկու կողմերի փոխադարձ կարծրատիպերն ու պատկերացումները ձևավորել դիվանագիտական հաղորդակցությունը և, ի վերջո, քաղաքական որոշումները:

Հետգաղութային մոտեցման ներմուծում: Ատենախոսությունը նորույթ է ներմուծում վերլուծելով Իրան-Մեծ Բրիտանիա հարաբերությունները հետգաղութային տեսանկյունից՝ շեշտը դնելով իշխանության անհավասար հարաբերությունների և գաղութատիրական անցյալի շարունակական ազդեցության վրա: Սա թույլ կտա խորը վերլուծել, թե ինչպես է բրիտանական կայսերական ժառանգությունը և նրա տնտեսական շահագործումը (մասնավորապես ԱԻՆԸ-ի գործունեությունը) սրացրել լարվածությունը և հրահրել Իրանի հակագաղութատիրական տրամադրությունները՝ հանգեցնելով նավթի ազգայնացման ճգնաժամին: Այս մոտեցումը լրացնում է ավանդական ռեալիստական վերլուծությունները՝ բացահայտելով նյութական ուժերի հիմքում ընկած պատմական և կառուցվածքային անհավասարությունները:

Բազմալեզու արխիվային աղբյուրների և նյութերի համադրում: Հետազոտության նորույթներից է նաև բազմալեզու արխիվային աղբյուրների՝ մասնավորապես իրանական և բրիտանական արխիվային նյութերի համալիր

օգտագործումը: Սա հնարավորություն է տալիս հարաբերությունները վերլուծելու երկու կողմերի տեսանկյուններից՝ գնահատելով դիվանագիտական փոխազդեցությունների և քաղաքական որոշումների վրա ազդող գործոնների լայն շրջանակը:

Այսպիսով, սույն ատենախոսությունը, կիրառելով ժամանակակից տեսական շրջանակներ և արխիվային հետազոտություն, փորձել է լրացնել Իրան-Մեծ Բրիտանիա հարաբերությունների վերաբերյալ գոյություն ունեցող բացերը և նոր լույսի ներքո ձևավորել գիտական պատկերացում թեմայի շուրջ:

Ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը: Ատենախոսության մեջ առաջ քաշված դրույթներն ու եզրահանգումները կարող են օգտակար լինել ներկայումս Իրանի Իսլամական Հանրապետության նկատմամբ գերտերությունների քաղաքականությունը բացահայտելու, ամբողջական ընկալելու և գնահատելու տեսանկյունից: Այն նաև թույլ կտա ճիշտ ընկալել Մեծ Բրիտանիայի կողմից շահական վարչակարգի հանդեպ քաղաքականության նրբությունները՝ դրանով իսկ օգնելով ըմբռնել արդի իրողությունները: Մերձավոր Արևելքի՝ մասնավորապես Իրանի նկատմամբ աշխատության եզրահանգումները կարող են օգտագործվել նաև Իրանի պատմությանը նվիրված դասընթացներում և ուսումնասիրություններում, ինչպես նաև շահեկան լինել ՀՀ արտաքին գործերի նախարարության և այլ գերատեսչությունների համար Իրանի նկատմամբ քաղաքականության մշակման տեսանկյունից:

Ատենախոսության փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը: Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդում: Այն քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել արևելագիտության ինստիտուտի Իրանի և Միջազգային հարաբերությունների բաժինների համատեղ նիստում: Ատենախոսության հիմնական դրույթները և եզրահանգումները լուսաբանվել են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում, Երիտասարդ արևելագետների միջազգային գիտաժողովներում ներկայացված զեկույցներում:

Հետազոտության աղբյուրագիտական հիմքը և հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը: Իրան-Մեծ Բրիտանիա հարաբերությունների 1940-1950-ական թվականների ուսումնասիրությունը միջազգային հարաբերությունների, Մերձավոր Արևելքի պատմության և նավթային քաղաքականության ոլորտներում մշտապես եղել է հետաքրքրության առարկա: Այնուամենայնիվ, թեմայի դիտարկման ձևերն ու հետազոտական առաջնահերթությունները զգալիորեն տարբերվել են ժամանակագրական, գաղափարախոսական և մեթոդաբանական առումով: Մեր նպատակն է վերլուծել

թեմայի ուսումնասիրության ընթացքը, ներկայացնել առկա գիտական գրականության հիմնական ուղղությունները, ինչպես նաև բացահայտել այն տեսական ու վերլուծական բացերը, որոնք փորձում է լրացնել տվյալ ատենախոսությունը:

Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են ինչպես արդեն գաղտնազերծված արխիվային նյութերը, այնպես էլ տվյալ ժամանակաշրջանի վերաբերյալ գիտական գրականություն՝ ներկայացված տարբեր երկրների պատմաբանների կողմից: Ատենախոսության համար առանցքային նշանակություն են ունեցել բրիտանական «The London gazette»-ի՝ Մեծ Բրիտանիայի ռազմածովային ուժերի գործողություններին վերաբերվող արխիվային նյութերը[1]: Այս փաստաթղթերը, որոնք տասնամյակներ շարունակ գաղտնի են պահվել և վերջերս են գաղտնազերծվել, արժեքավոր տեղեկություններ են պարունակում ռազմակալման ընթացքի վերաբերյալ: Դրանց լրացնում են բրիտանական պառլամենտական քննարկումների արձանագրությունները, որոնք լույս են սփռում Մեծ Բրիտանիայի քաղաքական դիրքորոշման վրա[2]:

Հետազոտության համար չափազանց կարևոր են նաև ԻԻՀ Ազգային գրադարանում գտնվող՝ արտաքին և ներքին գործերի նախարարությունների գաղտնազերծված փաստաթղթերը[3]: Դրանք հնարավորություն են տալիս հասկանալու Իրանի ներքին և արտաքին քաղաքականությանը վերաբերող գործընթացները ռազմակալման շրջանում: Բացի այդ, մեծ կարևորություն են ներկայացնում ԱՄՆ Պետդեպարտամենտի վերջերս հրապարակված արխիվային նյութերը[4]: Դրանք մանրամասն և հավաստի տեղեկություններ են տրամադրում

[1] The War Office, Despatch on operations in Iraq, East Syria and Iran from 10th April,1941 to 12th January,1942,
The London Gazette, 1946, p.4098. https://www.thegazette.co.uk/London/issue/37685/supplement/4093 , մուտք՝ 08.06.2025:

[2] House of Commons Hansard Debates,
https://publications.parliament.uk/pa/cm201415/cmhansrd/cm141106/debtext/141106-0002.htm,
մուտք՝ 08.06.2025

[3] سازمان اسناد کتابخانه ملی ایران، گزیده اسناد جنگ جهانی دوم و اشغال ایران از سوی متفقین، اسناد ۱-۲۵ (Իրանի ազգային գրադարանի և փաստաթղթերի կազմակերպություն, Երկրորդ համաշխարհային պատերազմի և Իրանի՝ դաշնակիցների կողմից օկուպացման վերաբերյալ փաստաթղթերի ընտրանի, փաստաթղթեր 1–25)

[4] The British Commonwealth; the Near East and Africa, The Minister in Iran (Dreyfus) to the Secretary of State, telegram No.740.001 Foreign relations of the United States diplomatic papers, (այսուհետ՝ FRUS) 1941, Volume 3, p.386 . https://history.state.gov/historicaldocuments/frus1941v03/d364, մուտք՝ 08. 06. 2025:
The Minister in Iran (Dreyfus) to the Secretary of State, Telegram 740.0011, FRUS, 1941, vol. 3, p. 411; https://history.state.gov/historicaldocuments/frus1941v03/d389 , մուտք՝ 08. 06. 2025:

ԱՄՆ բարձրաստիճան պաշտոնյաների՝ իրենց երկրի նախագահին, ազգային անվտանգության, տնտեսական և արտաքին գործերի գծով օգնականներին հղած տեղեկությունների միջոցով՝ բացահատելով ամերիկյան դիրքորոշումը և դիվանագիտական ջանքերը:

Մեծ նշանակություն ունեն Հայաստանի Հանրապետության Ազգային արխիվում պահվող նյութերը, որոնք վերաբերում են Իրանում Թուդե կուսակցության գործունեության, ինչպես նաև Իրանի ռազմակալման շրջանին[5]: Այս նյութերը թույլ են տալիս լրացնել պատկերը տարածաշրջանային ենթատեքստում և հասկանալու տեղական գործոնների դերը:

Ատենախոսությունը շարադրելիս լայնորեն օգտագործվել են խորհրդային հետազոտողների՝ տվյալ ժամանակաշրջանին վերաբերող մենագրությունները, կոլեկտիվ հրատարակությունները և հոդվածները: Այդ աշխատություններում, ինչպիսիք են Ս. Լ. Աղաևի, Վ. Գ. Տրուխանովսկիի, Մ. Վ. Պոպովի, Ս. Մ. Ալիևի, Ա. Զ. Արաբաջյանի, Լ. Մ. Կուլագինայի ուսումնասիրությունները, առկա է հարուստ նյութ և հարցերի հանգամանալի վերլուծություն՝ ներկայացնելով խորհրդային պատմագրության տեսակետները[6]:

Ռազմակալման, հետպատերազմական գործընթացների և նավթարդյունաբերության ազգայնացման վերաբերյալ բազմաբնույթ և հարուստ տեղեկություններ են տրամադրում արևմտյան պատմաբանները: Ուշադրության արժանի են Լ. Էլվելլ-Սաթթոնի, Ջ. Լենչովսկիի, Է. Իդենի, Է. Ռիդեր Բուլլարդի, Ք. Ռուզվելթի, Ա. Ք. Լեմբթոնի, Ք. Հալլի, Բ. Շվադրանի և այլոց աշխատությունները, որոնք արտացոլում են արևմտյան երկրների շահերն ու ընկալումները[7]:

[5] ՀԱԱ, ֆ.326, ց. 1, գ. 23:

[6] Агаев С. Л., Иран: Внешняя политика и проблемы независимости 1925-1941, М., 1971, Абдуразаков Б., Происки английского и американского империализма в Иране (1941-1947 годы), Ташкент, 1959, Алиев С.М.-Нефть и общественно - политическое развитие Ирана в XX в., М.,1985, Арабаджян А.З. Иран, Очерки новейшей истории, Москва, 1976, Иванов М.С. Новейшая история Ирана, М., 1965, Попов М. В., Американский империализм в Иране в годы Второй Мировой Войны, М., 1956, Мамедова Н. М., Городское предпринимательство в Иране, М.,1988, Трухановский В. Г., Внешняя политика Англии в период Второй мировой войны (1939-1945), М., 1965, Кулагина Л., Политика Англии в Иране во время Второй мировой войны, ст.58-59, <<Иран и Вторая мировая война>>, Сборник статей, М., 2011.

[7] Элвелл-Саттон Л. П., Иранская нефть, к истории «Политики силы», М., 1956, Lenczowski G., Russia and the West in Iran, 1918-1948, New York, 1949, Eden A., The memoirs of Sir Anthony Eden: Full circle, London: Cassell, 1960, Bullard S. R., Britain and the Middle East, London, 1951, Roosevelt K., Countercoup: The Struggle for the Control of Iran, McGraw-Hill, 1979, Lambton A. K. S., Landlord and peasant in Persia, London-New York-Toronto, 1953, Hull C., The Memoirs of Cordell Hull, Volume 2, New York, 1948, Shwadran B. 1955, The Middle East, Oil and the Great Powers, New York, Kirk George, The Middle East 1945-1950, London, 1954, Kinzer S., All the Shah's Men: An American Coup and the Roots of Middle East Terror, New Jersey, 2003, Ward S. R., Immortal: A Military History of Iran and its Armed Forces, Georgetown Univetsity Press, 2009, Stewart A. Richard, Sunrise at Abadan, The

Արժեքավոր ներդրում ունեն նաև իրանցի հեղինակների՝ մասնավորապես Ի. Զոուղիի, Ֆ. Ռուհանիի, Ա. Լանգրուդիի, ինչպես նաև Իրանի շահ Մ. Ռ. Փահլավիի ուսումնասիրությունները, որոնք հնարավորություն են տալիս հասկանալու Իրանի ներքին քաղաքականության և հասարակական տրամադրությունները[8]: Կարևոր է ընդգծել նաև հայ հետազոտողների՝ մասնավորապես Վ. Բայբուրդյանի և Գ. Իսկանդարյանի աշխատությունները ուսումնասիրվող շրջանի վերաբերյալ[9]: Այդ աշխատությունները բովանդակային առումով իրենցից մեծ արժեք են ներկայացնում:

Հարկ է նշել, որ մեր կողմից հիշատակած խորհրդային, արևմտյան և իրանցի հեղինակները նույն հարցերի վերաբերյալ հաճախ ցուցաբերում են տարբեր, հաճախ իրարամերժ մոտեցումներ, ինչը, բնականաբար, պայմանավորված է նրանց քաղաքական կողմորոշումների և տեսակետների տարբերությամբ: Ատենախոսությունն այս բազմազանությունը դիտարկում է որպես հետազոտության կարևորագույն առանձնահատկություն՝ ձգտելով ներկայացնել հնարավորինս օբյեկտիվ և հավասարակշռված պատկեր:

Բացի վերոնշյալ արխիվային փաստաթղթերից և մենագրություններից՝ ատենախոսության մեջ օգտագործվել են նաև միջպետական պայմանագրեր, բարձրաստիճան պաշտոնյաների, դիվանագիտական հաստատությունների միջև նամակագրական գրագրություններ, գագաթնաժողովների նիստերի արձանագրություններ, պետական գործիչների զրույցներ, ելույթներ և

British and Soviet Invasion of Iran, 1941, New York-Westport, Connecticut-London,1988, Woodward L., British Foreign Policy in the Second World War, London, 1962, Louis Wm. R., Britain and the overthrow of the Mosaddeq government, Syracuse: Syracuse University Press, 2004, Cronin Stephanie, Tribal politics in Iran: Rural conflicts and the new state 1921-1941, New York, 2007.

[8] Azimi F., Iran: The Crisis of Democracy, 1941-1953, London and New York, 1989, Arfa H., Under Five Shahs, An Atobiography, London, 1964, Fatemi S. N., Oil Diplomacy, New York, 1954, Hamzavi Abdol Hossein, Persia and The Powers, London, 1946, ذوقی ایرج، ایران و قدرتهای بزرگ در جنگ جهانی دوم،تهران،۱۳۷۲، راسخی لانگرودی احمد،موج نفت:تاریخ نفت ایران از امتیاز تا قرارداد،تهران،۱۳۸۶، پهلوی م. ر.،پاسخ به تاریخ، ۱۹۷۹، روحانی فؤاد، تاریخ ملی شدن صعنت نفت ایران،

فرمانفرمایان منوچهر، از تهران تا کاراکاس،نفت و سیاست در ایران،ج. ۱، (Ի. Զոուղի, Իրանը և մեծ տերությունները Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, Թեհրան, 1372 թ.; Ա. Ռասեխի Լանգրուդի, Նավթի ալիք. Իրանի նավթի պատմությունը՝ արտոնագրից մինչև պայմանագիր, Թեհրան, 1386 թ.; Մ. Ռ. Փահլավի, Պատմությանը պատասխան, 1979 թ.; Ֆուադ Ռուհանի, Իրանի նավթարդյունաբերության ազգայնացման պատմությունը; Մ. Ֆարմանֆարմաիան, Թեհրանից մինչև Կարակաս. Նավթը և քաղաքականությունը Իրանում, հատ. 1)

[9] Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Եր., 2006, Իսկանդարյան Գ., Իրանա-ամերիկյան հարաբերությունները 1942-1960 թթ., Եր., 2011:

հայտարարություններ, ինչպես նաև պաշտոնապես հրապարակված վիճակագրական տվյալներ[10]:

Աղբյուրների առանձին խումբ են կազմում ժամանակակիցների, ականատեսների, իրադարձությունների անմիջական մասնակիցների, բարձրաստիճան պաշտոնյաների և երկրների ղեկավարների հուշերը, օրագրերը, գրառումները, որոնք սկզբնաղբյուրային նշանակություն ունեն: Փաստագրական առումով արժեքավոր են Մոհամմադ Ռեզա Փահլավիի, Աշրաֆ Փահլավիի, ԱՄՆ պետքարտուղար Ք. Հալլի, Մեծ Բրիտանիայի վարչապետեր Ու. Չերչիլի, Է. Իդենի, Իրանում Բրիտանիայի դեսպան Ռ. Բուլլարդի, հուշերը և գրառումները, որոնք ներկայացնում են իրադարձությունների մասնակիցների անձնական տեսլականները և մեկնաբանությունները[11]:

Աղբյուրների վերջին խմբին են դասվում բազմալեզու օրաթերթերի, պարբերականների, ամսագրերի և վիճակագրական տվյալների նյութերը, որոնք օգնել են վերականգնելու հասարակական տրամադրությունները և հասկանալու իրադարձությունների լուսաբանումը ժամանակակիցների կողմից[12]:

Իրան-Մեծ Բրիտանիա հարաբերությունների 1940-50-ական թթ. ժամանակաշրջանի ուսումնասիրության համար առանցքային նշանակություն ունեն այն աշխատությունները, որոնք լուսաբանում են ինչպես միջազգային ուժային մրցակցությունը, այնպես էլ Իրանի ներսում ընթացող քաղաքական, հասարակական ու տնտեսական զարգացումները:

[10] Տե՛ս Запись четвертого заседания глав правительств. Тегеран, 1 декабря 1943 г. (См.: Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны 1941–1945 гг., Тегеранская конференция руководителей трех союзных держав – СССР, США и Великобритании. 28 ноября – 1 декабря 1943 г. М., Изд. политической литературы, 1984. Т. 2.), Թեհրան, Յալթա, Պոտսդամ, Փաստաթղթերի ժողովածու, Եր. 1970:

[11] Ն. Կ. Մ. Փահլավի Մոհամմադ Ռեզա, Առաքելություն հայրենիքիս համար, Թեհրան, 1973, پهلوی اشرف، خاطرات اشرف پهلوی، تهران، به آفرین، ۱۳۸۹ (Աշրաֆ Փահլավի, Աշրաֆ Փահլավիի հուշերը, Թեհրան, Բեհ-աֆարին, 1389 թ)

Churchill W. S., The Second World War, The Grand Alliance, Vol. 3, New York, 1950, Hull C., The Memoirs of Cordell Hull, Volume 2, New York, 1948, Bullard S. R., Britain and the Middle East, London, 1951, Eden A., The memoirs of Sir Anthony Eden: Full circle, London: Cassell, 1960,

[12] Известия, Правда", Народы - «Азии и Африки», Народы Передней Азии, New York Times" , Studies in Intelligence, "The Argus", International Journal of Middle East Studies, "The Time magazine", The Advocate", Middle-East Journal of Scientific Research, The National Geographic Magazine, Historical Journal of Film, Radio and Television, اطلاعات، کیهان، داد ایران، مردم، پست تهران، ایران، «Էթելաաթ», «Քեյհան», «Դադե Իրան», «Մարդում», «Փոսթե Թեհրան». «Իրանե Մա»)

Այնպիսի հեղինակների գործեր, ինչպես՝ Ջ. Լենչովսկին, Բ. Շվադրանը, Ջ. Քըրքն են, ներկայացնում են ժամանակին բնորոշ դիտարկումներ, որոնք որոշակի վերապահումներով, պահպանել են իրենց արժեքը[13]:

Այս շրջանում իրանցի հեղինակների բացառապես քննադատական վերաբերմունքը Արևմուտքի հանդեպ պայմանավորված էր փոխկապակցված քաղաքական, գաղափարական և պատմաքաղաքական գործոններով: Նման հեղինակների թվին են դասվում Ահմադ Ռասեխի Լանգրուդին, Ֆուադ Ռուհանին, Ղոլամռեզա Ալի Բաբային[14]:

Իրանի Իսլամական հեղափոխությունից հետո իրանական պատմագիտությունը սկսեց դիտարկել Մոհամմադ Մոսադեղի և նավթարդյունաբերության ազգայնացման գործընթացը որպես հակագաղութատիրական պայքարի խորհրդանիշ: Այս շրջանում իրանցի հեղինակների բացառապես քննադատական վերաբերմունքը Արևմուտքի հանդեպ պայմանավորված էր փոխկապակցված քաղաքական, գաղափարական և պատմաքաղաքական գործոններով: Նման հեղինակների թվին են դասվում Ահմադ Ռասեխի Լանգրուդին, Ֆուադ Ռոուհանին, Ղոլամռեզա Ալի Բաբային և այլք[15]:

Նշված հեղինակների աշխատությունները կարևոր են Իրանի նորագույն պատմության հիմնարար կետերի լուսաբանման համար: Սակայն ինչպես նշվեց, դրանցում առկա են ընդհանուր բնույթի սահմանափակումներ՝ միակողմանի աղբյուրների օգտագործում, իրանական հասարակության պասիվ ներկայացում և ժամանակակից տեսական շրջանակների բացակայություն: Ի տարբերություն այս աշխատությունների, մեր ատենախոսությունն առաջարկում է համալիր մոտեցում՝

---

[13] Kirk G., The Middle East in the War: Survey of International Affairs 1939-1946, London-New York-Toronto, 1954, 511 p. Lenczowski G., Russia and the West in Iran, 1918-1948, N. Y., 1949, 383 p. Shwadran B., The Middle East, Oil and the Great Powers, N. Y., 1955, 630 p.

[14] راسخی لانگرودی ا.، موج نفت: تاریخ نفت ایران از امتیاز تا قرارداد، تهران، ۱۳۸۶، ۲۸۷ صفحه، روحانی ف.، تاریخ ملی شدن صنعت نفت ایزان، تهران، ۱۳۵۲، ۵۴۹ صفحه، علی بابایی غ.، تاریخ سیاست خارجی ایران از شاهنشاهی هخامنشی تا به مروز، تهران، ۱۳۷۵، ۹۶۲ صفحه. (Ահմադ Ռասեխի Լանգրուդի, Նավթի ալիք. Իրանի նավթի պատմությունը՝ արտոնագրից մինչև պայմանագիր, Թեհրան, 1386 թ., 287 էջ; Ֆուադ Ռուհանի, Իրանի նավթարդյունաբերության ազգայնացման պատմությունը, Թեհրան, 1352 թ., 549 էջ; Ալի Բաբայի Ղ., Իրանի արտաքին քաղաքականության պատմությունը՝ Աքեմենյան կայսրությունից մինչև մեր օրեր, Թեհրան, 1375 թ., 962 էջ)

[15] راسخی لانگرودی ا.، موج نفت: تاریخ نفت ایران از امتیاز تا قرارداد، تهران، ۱۳۸۶، ۲۸۷ صفحه، روحانی ف.، تاریخ ملی شدن صعنت نفت ایزان، تهران، ۱۳۵۲، ۵۴۹ صفحه، علی بابایی غ.، تاریخ سیاست خارجی ایران از شاهنشاهی هخامنشی تا به مروز، تهران، ۱۳۷۵، ۹۶۲ صفحه. (Ահմադ Ռասեխի Լանգրուդի, Նավթի ալիք. Իրանի նավթի պատմությունը՝ արտոնագրից մինչև պայմանագիր, Թեհրան, 1386 թ., 287 էջ; Ռոհանի Ֆ., Իրանի նավթարդյունաբերության ազգայնացման պատմությունը, Թեհրան, 1352 թ., 549 էջ; Ղոլամռեզա Ալի Բաբայի, Իրանի արտաքին քաղաքականության պատմությունը՝ Աքեմենյան կայսրությունից մինչև մեր օրեր, Թեհրան, 1375 թ., 962 էջ)

համադրելով արտաքին և ներքին գործոնները, օգտագործելով բազմալեզու աղբյուրներ՝ պարսկերեն, հայերեն, անգլերեն, ռուսերեն, և վերահմաստավորելով Իրանի սուբյեկտային դերը՝ հատկապես 1940-1950-ական թվականների քաղաքական բարդ միջավայրում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլխից (որոնք իրենց հերթին բաժանվում են ենթագլուխների), եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Առաջաբանի մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են աշխատանքի հիմնական նպատակներն ու դրույթները, գիտական նորույթը, թեմայի ժամանակագրական սահմանները, անդրադարձ է կատարվում Իրանի և Մեծ Բրիտանիայի քաղաքական հարաբերությունների ձևավորման սկզբին, Իրանի նավթարդյունաբերության ձևավորմանը, տրվում է թեմայի ուսումնասիրության պատմությունը և գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ **«ԻՐԱՆ-ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941-1945 ԹԹ.)»**, ներկայացնում է Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Իրանի ռազմակալումը, ռազմակալումից հետո Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականությունն Իրանում, ինչպես նաև Իրանում նավթային մենաշնորհ ստանալու համար գերտերությունների մրցակցությունը: Գլուխը կազմված է երեք ենթագլխից: Առաջին ենթագլխում, որը վերնագրված է **«Իրանի ռազմակալման բրիտանա-խորհրդային զորքերի գործողությունը. նպատակը և ընթացքը (1941 թ.)»**, հանգամանալից անդրադարձ է կատարվում Մեծ Բրիտանիայի և ԽՍՀՄ-ի կողմից Իրանի տարածքի ռազմակալմանը, դրա նախադրյալներին, իրական պատճառներին: Վերլուծվում է նաև Իրանի չեզոքության խախտումը: Երկրորդ ենթագլխում՝ **«Մեծ Բրիտանիայի քաղաքականությունն Իրանում ռազմակալման շրջանում. ներքին վերահսկողություն և տնտեսական շահեր»** վերլուծվում է Մեծ Բրիտանիայի կառավարության քաղաքականությունն Իրանում ռազմակալման ժամանակ՝ շեշտը դնելով տնտեսական վերահսկողության հաստատման և ռեսուրսների կառավարման վրա: Ուսումնասիրվում են նաև Մեծ Բրիտանիայի հարաբերությունները տեղական իշխանությունների և Իրանի քաղաքական վերնախավի հետ:

Հաջորդ ենթագլուխը՝ **«Գերտերությունների մրցակցությունն Իրանում նավթային մենաշնորհի համար. Իրանը՝ աշխարհաքաղաքական առանցքի երկիր»**, ուսումնասիրում է Մեծ Բրիտանիայի, ԽՍՀՄ և ԱՄՆ միջև նավթային կոնցեսիաներ ձեռք բերելու համար մրցակցությունը՝ բացահայտելով նավթի դերը՝ որպես աշխարհաքաղաքական պայքարի հիմնական տարր: Վերլուծության են ենթարկվում նաև յուրաքանչյուր տերության ռազմավարություններն Իրանի նավթարդյունաբերության մեջ իրենց դիրքերն ամրապնդելու համար:

Երկրորդ գլուխը՝ **«ԻՐԱՆԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ (1945-1949 ԹԹ.)»**, ներկայացնում է ՄԱԿ-ի օրակարգում «Իրանական հարցի» ներառումը, Մեծ Բրիտանիայի հակազդեցությունն Իրանում ծագած ինքնավարության շարժումներին, ինչպես նաև Իրանում բրիտանաամերիկյան հակասությունների սրմանը: Երկրոդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին ենթագլուխը՝ **«Իրանական հարցը» ՄԱԿ-ի օրակարգում. Իրանի դիվանագիտական պայքարի բախումը բրիտանական շահերի հետ»** քննարկվում է իրանական ճգնաժամի միջազգայնացումը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում: Վերլուծության է ենթարկվում Խորհրդային Միության զորքերի դուրս բերման խնդիրը և Մեծ Բրիտանիայի դիվանագիտական ջանքերը՝ հակազդելու Խորհրդային ազդեցության տարածմանը՝ պաշտպանելով տարածաշրջանային իր շահերը: Երկրորդ ենթագլխում՝ **«Բրիտանական հակազդեցությունն Ատրպատականի և Քրդստանի ինքնավարության շարժումներին. Իրանի պայքարը հանուն կայունության»**, ուսումնասիրվում է Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը Ատրպատականի և Քրդստանի ինքնավարական շարժումների նկատմամբ, որոնք հովանավորվում էին ԽՍՀՄ-ի կողմից: Տվյալ գլխի վերջին ենթագլխում՝ **«Բրիտանաամերիկյան հակասությունների սրումն Իրանում և 1949 թ. «Լրացուցիչ համաձայնագրի» հետևանքները»**, քննարկվում է ԱՄՆ աճող ազդեցությունն Իրանում, որը հանգեցրեց բրիտանաամերիկյան շահերի բախման: Անդրադարձ է կատարվում նաև 1949 թվականի Լրացուցիչ համաձայնագրի նպատակներին, դրա դիվանագիտական ընկալմանը և Իրանի հասարակության կողմից դրա ընդունմանը:

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է **«ԻՐԱՆ-ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱՎԹԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ (1949-1954 ԹԹ)»**՝ բաղկացած երեք ենթագլխից: Երրորդ գլխում ներկայացվում է Իրանում նավթարդյունաբերության ազգայնացման գործընթացը, ազգայնականության վերելքը, 1953 թ. Իրանում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումը, ինչպես նաև հեղաշրջումից հետո Միջազգային նավթային կոնսորցիումի ձևավորումը: Առաջին ենթագլխում՝ **«Նավթարդյունաբերության ազգայնացումն Իրանում. ազգայնականության վերելքը և բրիտանական հակազդեցությունը (1949-1953 թթ.)»**, վերլուծության է ենթարկվում Իրանում ազգայնական շարժման վերելքը և դրա գագաթնակետը՝ Մ.Մոսադեղի վարչապետության և նավթարդյունաբերության ազգայնացման որոշման միջոցով: Ուսումնասիրվում է բրիտանական ԱԻՆԸ դերը և Մեծ Բրիտանիայի կառավարության քաղաքական և տնտեսական արձագանքն ազգայնացման գործընթացին: Երկրորդ ենթագլխում՝ **«1953 թ. ռազմական հեղաշրջումն Իրանում. Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի գաղտնի դերակատարությունը»**, մանրամասն քննարկվում է 1953 թվականի օգոստոսին Իրանում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումը՝ բացահայտելով դրա դրդապատճառները, ընթացքը, ինչպես նաև կարճաժամկետ և երկարաժամկետ հետևանքները: Վերջին ենթագլխում՝ **«Իրանը և Միջազգային նավթային կոնսորցիումի ձևավորումը (1954 թ.). նավթային շահերի վերաբաշխումը»**, վերլուծության է ենթարկվում հեղաշրջումից հետո Իրանի նավթարդյունաբերության կարգավիճակը և Միջազգային նավթային կոնսորցիումի ստեղծումը: Ուսումնասիրվում է, թե ինչպես էր նորաստեղծ կոնսորցիումը արտացոլում նավթային շահերի վերաբաշխումը Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի և արևմտյան մյուս տերությունների միջև:

Եզրակացության բաժնում ամփոփված են աշխատանքի հիմնական արդյունքները:

Սույն ատենախոսությամբ փորձ է կատարվել ներկայացնել Իրանի և Մեծ Բրիտանիայի սոցիալ-քաղաքական և տնտեսական հարաբերությունների կերպափոխումները 1940-50-ական թվականներին, որոնց ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել միջազգային հարաբերությունների նոր շրջափուլերի տրամաբանությունը: 1940-50-ական թթ. Իրան-Մեծ Բրիտանիա հարաբերությունների դինամիկան միջազգային քաղաքական համակարգում պերիֆերիական[16] պետությունների ինքնիշխանության, ռեսուրսների վերահսկման և արտաքին ուժային ճնշումների փոխազդեցությունների բնութագրման օրինակներից մեկն է, որն անմիջական կապ ունի հետգաղութային միջազգային հարաբերությունների տրամաբանության հետ:

Մեծ Բրիտանիայի վարքագիծն Իրանի նկատմամբ բնութագրվում է ռեալիստական և նեոգաղութային մոտեցումների համադրությամբ: Բրիտանական կառավարությունը, հետապնդելով գլոբալ էներգետիկ շահերը և ունենալով կայսերական շահագործման ինստիտուցիոնալ ժառանգություն, Իրանում հաստատեց վերահսկողության ձևեր, որոնք դիվանագիտական և տնտեսական ոլորտներից բացի ներառելում էին նաև անվտանգության,

[16] Այս եզրույթի ակադեմիական ձևակերպումը կապվում է ամերիկացի սոցիոլոգ Իմմանուել Վալերսթեյնի հետ, ով 1970-ականներին ձևակերպեց համաշխարհային համակարգի իր տեսությունը: Ըստ այդմ, գոյություն ունի կենտրոն, կիսապերիֆերիա և պերիֆերիա: Պերիֆերիայի մեջ ներառված են այն երկրները, որոնք հիմնականում հումքի մատակարար են, ունեն թույլ արդյունաբերություն և կախված են արտաքին քաղաքական և տնտեսական ազդեցություններից:
Տե՛ս Wallerstein I., The Modern World-System. Vol. I, Capitalist Agriculture and the Origins of the European World-Economy in the Sixteenth Century, New York-London, Academic Press, 1974. https://dl1.cuni.cz/pluginfile.php/495082/mod_resource/content/1/Wallerstein-Modern%20World-System%20I.pdf մուտք՝ 21. 08. 2025:

գաղափարախոսական և տեղեկատվական բաղադրիչներ: Նավթային ոլորտում բրիտանական մենաշնորհը դրսևորվում էր որպես յուրահատուկ հարթակ, որի միջոցով Մեծ Բրիտանիան ոչ միայն իրականացնում էր տնտեսական շահագործում, այլ նաև թելադրում էր իր քաղաքական ռազմավարությունը: Ընդհանուր առմամբ, եթե դիտարկելու լինենք Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը Մերձավոր Արևելքում, ապա վերջինս հիմնականում հենվում էր ֆեոդալական-միապետական վարչակարգերի և խմբավորումների վրա: Սոցիալ-տնտեսական հին ինստիտուտների արհեստական պահպանումը և վարչական բյուրոկրատական ղեկավարման ընդհանուր կառուցվածքի մեջ նրանց ներառումը բրիտանական գաղութային քաղաքականության բնութագրիչ գիծն է: Մյուս կողմից, 1950-ական թվականներին Իրանում Մ. Մոսադեղի գեներացրած ազգայնական շարժման զարթոնքը նպաստեց նավթարդյունաբերության ազգայնացմանը, սակայն խորքի մեջ ուներ պոպուլիստական բնույթ, հետևաբար՝ ձախողվեց:

Այսպիսով, Իրանում Մեծ Բրիտանիայի ընդհանուր ազդեցության գործոնները պետք է բաժանել մի քանի մասի՝ հասարակական-քաղաքական, ազդեցությունը նահանգների և ցեղերի վրա, տնտեսական գործոն, ռազմական գործոն, տեղեկատվական կամ գործակալական ցանց, մշակութային գործոն:

Աշխատության շրջանակներում իրականացրած պատմաքաղաքական վերլուծությունը ցույց տվեց, որ 1941 թ. Իրանի տարածքի ռազմակալումը Մեծ Բրիտանիայի և ԽՍՀՄ կողմից, ուներ գաղութատիրական բնույթ: Մեծ Բրիտանիան իր կայսերական տարածքները պահելու և Երկրորդ համաշխարհային պատերազմում ներգրավվելու համար, մեծապես կախված լինելով իրանական նավթից, որի արդյունահանման մենաշնորհն ամբողջովին իրեն էր պատկանում, կազմակերպեց և իրականացրեց Իրանի տարածքի ռազմակալումը ԽՍՀՄ հետ միասին՝ ապահովագրելու ԱԻՆԸ բոլոր վտանգներից: Իրանաբրիտանական հարաբերությունների պատմության ողջ ընթացքում Մեծ Բրիտանիայի կողմից ռազմական ուժի ցուցադրումը որևէ պատեհ ու անպատեհ առիթով եղավ անխուսափելի և ժամանակ առ ժամանակ շարունակվեց դրսևորվել նույնիսկ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Այդ միջամտությունը խաթարեց Իրանի ինքնիշխանությունը՝ ստեղծելով դինամիկ անհավասարակշռություն պետության ներսում, որը հետագայում դարձավ արտաքին վերահսկողության ամրապնդման գործիք: Նույն գործընթացի շարունակությունը դիտարկվում է նաև 1953 թվականի հեղաշրջման մեջ, որի կազմակերպման գործում Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի համագործակցությունը վկայում է նեոգաղութային ճնշման մեխանիզմների մասին՝ համադրելով արտաքին դիվանագիտական ճնշումը և տեղական էլիտաների շահագրգռվածության մոբիլիզացիան:

Ի վերջո ատենախոսության գիտական ներդրումը կարելի է ամփոփել հետևյալ ուղղություններով.

1. Տեսական մակարդակում՝ համադրվել է ռեալիզմն ու նեոգաղութային քննադատությունը, ձևավորել երկշերտ վերլուծություն՝ պետական շահերի և գաղութային կախվածության համատեքստում:
2. Մեթոդաբանական առումով՝ աշխատանքը ներմուծել է դիսկուրսային վերլուծությունը որպես արդյունավետ գործիք՝ ազգային ինքնության, ինքնիշխանության և արտաքին ազդեցության փոխառնչության վերլուծության համար:
3. Աղբյուրագիտական մակարդակում՝ ներկայացվել է բազմալեզու, բազմաբնույթ նյութերի համադրությամբ:
4. Պատմաքաղաքական մակարդակում՝ Իրան-Մեծ Բրիտանիա հարաբերությունները ներկայացվեցին ոչ միայն որպես երկկողմ քաղաքական գործընթաց, այլ որպես գլոբալ հեգեմոնիկ համակարգի օրինակ՝ կաղապարված արտաքին շահերի, ներպետական ճգնաժամերի և ռեսուրսային կառավարման շուրջ:

Այսպիսով, 1940-1950-ական թվականների Իրան-Մեծ Բրիտանիա հարաբերությունների ուսումնասիրությունը, ինչպես ներկայացված է սույն ատենախոսության մեջ, չի սահմանափակվում պատմական փոխակերպումների վերլուծությամբ: Այն վեր է հանում միջազգային ուժային քաղաքականության ներքին տրամաբանությունը և մոտիվացիան, ինչպես նաև արտաքին ուժերի կողմից քաղաքական գործելակերպի ուղղորդման մեխանիզմները: Հարկ է փաստել, որ բրիտանական ռազմակալումը բացասական խոր հետք թողեց և ատելություն սերմանեց իրանական ազգի ենթագիտակցության մեջ, որը ժամանակ առ ժամանակ դրսևորվում է իրանական պաշտոնական խոսույթում և արտացոլվում հասարակական տրամադրություններում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.

1. Սողոմոնյան Հ.,Գերտերությունների մրցակցությունն Իրանում նավթային կոնցեսիաների համար. Իրանը որպես աշխարհաքաղաքական առանցք, Տարածաշրջան և աշխարհ, Եր., 2025, հ. 6(61), էջ 17-24:
2. Soghomonyan H., Iran's Political and Economic Situation During the British-Soviet Military Occupation, Herald of Social Sciences, Yer., 2024, No 1 (670), pp.119-126.
3. Սողոմոնյան Հ., Անգլո-խորհրդային զորքերի կողմից Իրանի ռազմակալման գործողությունը (1941 թ.), Բանբեր Երևանի Երևանի

համալսարանի, միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, Եր., 2023, No 1. (40), pp. 28-40.
4. Soghomonyan H., The 1953 Coup in Iran and the Role of Great Britain in it, Bulletin of the Institute of Oriental Studies, Yer., 2022, Vol. 2, Issue 2, pp. 111-123.
5. Սողոմոնյան Հ., Իրանի պայմանագիրը Միջազգային նավթային կոնսորցիումի հետ (1954 թ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Եր., 2020, Հատոր XXXIII, Պրակ 2, էջ 140-159:
6. Սողոմոնյան Հ., 1945-1946 թթ. իրանական ճգնաժամը և Մեծ Բրիտանիայի դիրքորոշումը, Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ, Եր., 2017, հ. XI-XII, էջ 156-170:
7. Սողոմոնյան Հ., Իրան-Մեծ Բրիտանիա հարաբերությունները նավթարդյունաբերության ազգայնացման փորձի ժամանակ (1950-1953թթ.), Մերձավոր Արևելք. Պատմություն, քաղաքականություն, մշակույթ, Եր., 2014, հ. IX-X, էջ 530-542:

АЙК МАМИКОНОВИЧ СОГОМОНЯН
ИРАНО-БРИТАНСКИЕ ОТНОШЕНИЯ В 1940-1950-х ГОДАХ.

Диссертация на соискание ученой степени кандитата исторических наук по специальности 07.00.02-"Всемирная история".

Защита состоится 25 февраля 2026 года, в 14:00 часов на заседании специализированного совета 006, действующего при Институте востоковедения НАН РА, по адресу:0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Отношения между Ираном и Великобританией в 1940–1950-х годах продолжают оставаться одной из ключевых тем в истории международных отношений и региональной политики. Это обусловлено как влиянием событий данного периода на внутреннюю и внешнюю политику Ирана, так и их значимостью в контексте масштабных геополитических процессов.

Исследуемый нами период совпадает с решающими этапами мировой истории: от Второй мировой войны до начальной фазы Холодной войны.

Актуальность темы обусловлена также современным состоянием международных отношений. В XXI веке геополитическое положение Ирана, его нефтяные и энергетические ресурсы, а также характер отношений с Западом продолжают формироваться на том историческом фундаменте, который был заложен в 1940–1950-х годах. Данный исторический опыт имеет важное значение для понимания нынешней осторожности внешней политики Исламской Республики Иран, ее недоверия к Западу и подчеркнутой чувствительности к вопросам суверенитета.

Основная цель диссертационного исследования заключается во всестороннем анализе и представлении отношений между Великобританией и Ираном в 1940–1950-х годах, с выявлением причин, особенностей и последствий их формирования. Особое внимание уделено фактору нефти и влиянию сверхдержав (СССР, США) в геополитическом контексте данного периода.

Данная диссертация представляет собой критический и всесторонний анализ ирано-британских отношений в 1940–1950-х гг., основанный на теоретических и методологических подходах, принятых в современном академическом сообществе, что обеспечивает её научную новизну. Работа является попыткой рассмотреть ряд ключевых проблем в новом свете.

Диссертация состоит из введения, трех глав (которые, в свою очередь, подразделяются на параграфы), заключения и списка использованной литературы.

Во введении обосновывается актуальность темы, представляются основные цели и положения работы, научная новизна, хронологические рамки исследования; рассматриваются истоки формирования политических отношений между Ираном и Великобританией, процесс становления нефтяной промышленности Ирана, а также приводится историография вопроса и обзор литературы.

Первая глава- **«Ирано-британские отношения в годы Второй мировой войны (1941–1945 гг.)»** -подразделяется на три параграфа. В первом параграфе, озаглавленном **«Британо-советская операция по оккупации Ирана: цели и ход (1941 г.)»**, подробно рассматривается ввод войск Великобритании и СССР на территорию Ирана, предпосылки и истинные причины этой операции. Также

анализируется факт нарушения нейтралитета Ирана. Во втором параграфе исследуется политика британского правительства в Иране в период оккупации с акцентом на установление экономического контроля и управление ресурсами. Изучаются взаимоотношения Великобритании с местными властями и политической элитой Ирана. Следующий параграф посвящен изучению конкуренции между Великобританией, СССР и США за получение нефтяных концессий, что раскрывает роль нефти как ключевого элемента геополитической борьбы. Анализируются стратегии каждой из держав по укреплению своих позиций в нефтяной промышленности Ирана.

Во второй главе - **«Иранский кризис и позиция Великобритании на начальном этапе Холодной войны (1945–1949 гг.)»** — рассматривается интернационализация иранского кризиса в Совете Безопасности ООН. Анализируется вопрос вывода советских войск и дипломатические усилия Великобритании по противодействию расширению советского влияния в целях защиты своих региональных интересов. Далее исследуется политика Великобритании в отношении поддерживаемых СССР автономных движений в Азербайджане и Курдистане. В заключительном параграфе данной главы обсуждается растущее влияние США в Иране, которое привело к столкновению британских и американских интересов. Также рассматриваются цели Дополнительного соглашения 1949 года, его дипломатическая интерпретация и восприятие иранским обществом»

В третьей главе - **«Ирано-британские отношения в период кризиса национализации нефтяной промышленности (1949–1954 гг.)»** — анализируется подъем националистического движения в Иране, кульминацией которого стало назначение М. Мосаддыка на пост премьер-министра и решение о национализации нефтяной отрасли. Исследуется роль Англо-иранской нефтяной компании (АИНК) и политико-экономическая реакция британского правительства на процесс национализации. Далее подробно рассматривается военный переворот в Иране в августе 1953 года с выявлением его предпосылок, хода событий, а также краткосрочных и долгосрочных последствий. В заключительном параграфе анализируется статус нефтяной промышленности Ирана после переворота и создание Международного нефтяного консорциума. Изучается, каким образом новообразованный консорциум отражал перераспределение нефтяных интересов между Великобританией, США и другими западными державами.

В **заключении** подводятся основные итоги исследования.

HAYK MAMIKON SOGHOMONYAN
IRAN-GREAT BRITAIN RELATIONS IN THE 1940s-1950s

The dissertation is submitted for pursuing the Scientific Degree of the Candidate of Historical Sciences in the field of "World History" 07.00.02. The defence of the dissertation will take place on February 25, 2026, at 14:00 at the meeting of the HESC Specialized Council 006 at the Institute of Oriental Studies of NAS RA. Addres: Yerevan, 0019, Marshal Baghramyan Ave., 24/4.

SUMMARY

The relations between Iran and Great Britain during the period of 1940s1950s remain a pivotal subject of study within the history of international relations and regional politics. This significance stems from the profound impact of the era's events on Iran's domestic and foreign policies, as well as their broader implications within large-scale geopolitical processes.

The period under our study coincides with crucial phases of world history, spanning from the Second World War to the initial stages of the Cold War.

The relevance of this topic is further underscored by contemporary international relations. In the 21st century, Iran's geopolitical standing, its petroleum and energy resources, and its relations with the West continue to be shaped by the same historical foundations established during the 1940s and 1950s. This historical experience is essential for understanding the Islamic Republic of Iran's current foreign policy posture, specifically its strategic caution, entrenched mistrust of the West, and heightened sensitivity toward national sovereignty.

The primary objective of this dissertation is to conduct a comprehensive analysis of the relations between Great Britain and Iran from 1940s to 1950s, elucidating their underlying causes, distinct characteristics, and long-term consequences. Particular emphasis is placed on the role of the oil factor and the influence of global superpowers (the USSR and the USA) within the geopolitical context of that era.

This dissertation presents a critical and comprehensive analysis of Iran-Great Britain relations between 1940s and 1950s, grounded in the theoretical and methodological approaches widely accepted in the contemporary academic field, which ensures its scholarly novelty. The work represents an endeavor to examine a series of key issues in a new light.

The dissertation comprises an introduction, three chapters (each subdivided into respective sections), a conclusion, and a bibliography.

The introduction substantiates the relevance of the topic and presents the primary objectives and propositions of the work, its scholarly novelty, and its chronological boundaries. It also addresses the origins of Anglo-Iranian political relations and the formation of Iran's oil industry, while providing a historical overview of the subject's scholarship and a literature review.

Chapter One, titled "Iran-Great Britain Relations During World War II (1941–1945)," is divided into three sections.

The first section, "The Anglo-Soviet Invasion of Iran: Objectives and Progression (1941)," provides a detailed examination of the occupation of Iranian territory by Great Britain and the USSR, including its prerequisites and underlying causes. It further analyzes the violation of Iran's neutrality. **The second section examines the policies of the**

British government in Iran during the occupation, with a focus on the establishment of economic control and resource management. It also investigates Great Britain's relations with local authorities and the Iranian political elite. **The final section explores the competition among Great Britain, the USSR, and the USA to secure oil concessions,** identifying oil as a primary element of geopolitical struggle. The strategies employed by each power to consolidate their positions within Iran's petroleum industry are also subjected to analysis.

Chapter Two, titled "The Iranian Crisis and Great Britain's Position during the Initial Phase of the Cold War (1945–1949)," discusses the internationalization of the Iranian crisis within the UN Security Council. It analyzes the issue of the withdrawal of Soviet troops and Great Britain's diplomatic efforts to counteract the expansion of Soviet influence while safeguarding its regional interests. Furthermore, the chapter examines British policy toward the autonomous movements in Azerbaijan and Kurdistan, which were sponsored by the USSR. The final section of this chapter addresses the growing influence of the United States in Iran, which led to a clash of British and American interests. It also reflects on the objectives of the 1949 Supplemental Agreement, its diplomatic perception, and its reception by Iranian society

Chapter Three, titled "Iran-Great Britain Relations During the Oil Nationalization Crisis (1949–1954)," analyzes the rise of the nationalist movement in Iran, culminating in Mohammad Mosaddegh's premiership and the decision to nationalize the oil industry. The chapter investigates the role of the British Anglo-Iranian Oil Company (AIOC) and the British government's political and economic responses to the nationalization process. Subsequently, it provides a detailed discussion of the August 1953 military coup in Iran, uncovering its motivations, progression, as well as its short-term and long-term consequences. The final section analyzes the status of Iran's oil industry following the coup and the formation of the International Oil Consortium. It examines how this newly established consortium reflected the redistribution of petroleum interests among Great Britain, the United States, and other Western powers.

The Conclusion summarizes the primary findings and results of the study.